

Արձանագրություն թիվ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

28 փետրվարի 2019թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15 անդամները: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ամփոփում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. 2018-19 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:
/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, գիտական խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված է երեք հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա մանրամասն ներկայացրեց քննություններից հետո, այնուհետև

առաջին և երկրորդ լուծարքային շրջաններից հետո գնահատման արդյունքները /ուսանողների գնահատման ամփոփ տվյալները կցվում է արձանագրությանը/ և ցուցաբերած առաջադիմությունը՝ ըստ մասնագիտությունների, կուրսերի և ուսման կարգավիճակների: Մասնավորապես նշվեց, որ ֆակուլտետի թվով 60 ուսանողներ ստուգարքներից և քննություններից հետո բոլոր կուրսերում , բացի դիզայն չորրորդ կուրսից , ունեցել են ակադեմիական պարտքեր: Նրանցից առավել մեծ թիվ են կազմում „Դիզայն” մասնագիտության երկրորդ կուրսի 21 ուսանողներից 3-ը ունեցել են ակադեմիական պարտքեր: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը 2018-19 ուստարվ կիսամյակի քննաշրջանից հետո կազմում է 90%, առաջին լուծարքային շրջանից հետո 93,33%, իսկ երկրորդից հետո 100%:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հ.Ասատրյանը, Լ.Ֆլջյանը մտահոգություն հայտնեցին վերոհիշյալ ուսանողների ոչ պատշաճ վերաբերմունքի և մասնագիտական ցածր որակների դրսևորման վերաբերյալ և առաջարկեցին լրացուցիչ պարապմունքների միջոցով շտկել իրավիճակը:

ՈՐՈՇԵՑԻՆ — Հանձնարարել „Գծանկարի, գունանկարի և քանդակի „ ամբիոնի վարիչ Հ.Ասատրյանին վերոնշյալ ուսանողների հետ կցել ամբիոնի փորձառու դասախոս և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ՝ նրանց մասնագիտական որակների բարձրացման և անհրաժեշտ մակարդակի ապահովման նպատակով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2018-19թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը, ավարտական կուրսերի քննաշրջանի գրաֆիկը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում, որի արդյունքում հաշվի են առնվել նրանց կարծիքները ևս:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ս.Հովհաննիսյանը, Բ.Մխիթարյանը, Դ.Զիբուխյանը: Նրանք ի գիտություն ընդունեցին ներկայացված ժամանակացույցը, քննաշրջանի գրաֆիկը և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2018-19թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և գրաֆիկը ներկայացնել ՈՒՄՎ հաստատելու համար:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ Ա.Մարգարյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների վիճակը և նշեց, որ բոլոր ուսանողները ավարտել են առաջին փուլը ` թեմաների և էսքիզների վերջնական տարբերակները , որոնք

հավանության են արժանացել ամբիոնների նիստում և անցել հաջորդ՝ նյութերի հայթայթման և կատարման փուլին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ—Հ.Ասատրյանը,Ս.Հովհաննիսյանը,Լ.Ֆլջյանը, Մ.Ստեփանյանը,Ա.Զիրուխյանը և կարևորեցին ավարտական աշխատանքների որակական կողմը, որի համար անհրաժեշտ են ձեռք բերել նյութեր:

ՈՐՈՇԵՑԻՆ- Երկշաբաթյա ժամանակամիջոցում ֆակուլտետի դեկանին ներկայացնել ավարտական աշխատանքների կատարման համար պահանջվող նյութերի ցանկը:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք.Հ.Մխիթարյան